Ե. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 2 ՄԱՐՏ 1902 ԹԻՎ 396

ՇԱՐԺՈՒՄ

ԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Աւստրոհունգարիոյ համար Տարեկան 15
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Տպագրության տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կըլլայ։

Վաճառքի համար ձեռքէ 10 սանթիմ

Հասցէ՝ ոտանի՝ դրկել
Редакция на вѣстникъ
Шаржумъ»
Гарна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Ստորագրեալ հաշիւներ չեն տրուիր

Աւելացեալ գինը
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԵԼԱՆԻԿ ՎՃԱՐԷ

ՀԵՐԻՔ

Հերի՛ք, ո՛վ ծով, ալիքներդդ տրրտում լան,
Անհուն կոծը մրմնջելով ցուրտ ափին,
Մինչ իմ երկրէս արեան գետեր կը թափին.
Դաշտերն ի վար սփռելով մահ, հուր, թալան։

Թող յուզէ՛ քեզ հերոս Հայուն այս ներկան,
Կոհակներդդ թող ժանտ ցասմամբ բորբոքին,
Ու հրահրեն վրէժխնդիր բորբոքին,
Հոգւոյս մէջ, ուր խուլ բողոքի ձայներ կան։

Եւ անվեհեր, անյաղթ կռուի թող դաս տան,
Ալիքդդ ինձ—ազատութեան զինուորին,
Որ ես աւելի զայրոյթովդդ այն խորին
Թռչի՛մ արագ իմ պաշտելի Հայաստան։

Վա՜ռ, հրաչէկ տենչեր պահուած կան յետին
Ճալքերուն մէջ այրող սրտիս՝ տոգորուն
Ցաւերովը Հայրենեաց թա՛րմ վէրքերուն։

Կարմի՛ր տենչեր, որոնց առջեւ կ'անհետին
Հրապոյրքը ջինջ ալեակիդ թո՛յլ ծըփուն
Որ իր անմիտ ողբը կ'երգէ օրն ի բուն։

ՎԷՏՍ.

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Փողոցային միութենականների խնդիրը նոր չէ։

Դեռ մի քանի տարի առաջ, երբ կոտորածների թոյլատրութիւնը շատ ծանր ու թարմ էր, ու մի քանի ապուշներ յեղափոխականների գործունէութեան ձեւն էին պատճառ համարում այդ կոտորածներին, մի երկու վաղեմի վկայեալ յեղափոխականներ, որոնք այդ օրերում գինետների պատուաւոր անդամներ էին, իրենց գլխին հաւաքելով մի քանի միամիտ հայ գիւղացիներ, ու մեծաքանակ փողոցային պատարկաշրջիկներ, միութեան դիմակը հագան և մի միայն իրենց չար կրքերին բաւականութիւն տալու համար միութեան հարցը մէջտեղ գցեցին։

Այդ բարոյապէս ընկածներից ու մտաւորապէս բոլորովին անանկներից կազմված խմբակը այնքան առաջ գնաց, որ նոյն իսկ մահուան սպառնագրեր ուղարկեց յեղափոխական կուսակցութիւնների այն ներկայացուցիչներին, որոնք բացարձակապէս հակառակ էին այդ փողոցային տարրին։

Բայց կարճ միջոցում փողոցային միութենականները մէջ տեղից վերացան, մի մէյն յաջողելով մի քանի հարիւր ֆրանք շորթելու միամիտ ամբոխից, որը և գինետներում ծախսեցին։

Հիմա կրկնվում է նոյնը. անպէտք, անխելք, վատ արարածներ, որոնք մեր բոլոր կուսակցութիւններին էլ իրենց սրտի ամբողջ ուժով ատում են, միութեան դիմակ են հագել, ոչ թէ յեղափոխականներին միացնելու համար, այլ իրենց կարճ խելքովը չլատելու համար։ Դրանք միութեան դիմակով որսում են միամիտ հայեր, նրանց աւրիւն քրտինքով աշխատած դրամը կորզում. իսկ տակից մէկան ջանքեր են գործ դնում յեղափոխական հակայ հաստատութիւնները քանդելու։

Մենք տեսնում ենք որ կան մարդիկ, որոնք վախենում այդ խմբակների գոյութիւնից. կաղ և ապուշներ որ դրանց բուսնելը փաստ են բերում մեր յեղափոխական մարմինների անվստահելիութեան։

Բոլորովին սխալ կարծիք. այդ խմբակների գոյութիւնը շատ կարճատեւ է, և ոչ վտանգաւոր մեր յեղափոխական կուսակցութիւնների համար։

Հաստատուն կաղնիների արմատների մօտ և հայկատակ փոքրիկ բոյսեր են բուսնում. և այդ բոյսերի գոյութիւնը երբէք չէ կարողանում արգիլել ուժեղ կաղնուն իր գոյութիւնը շարունակել։

Ու արեւի այրող ճառագայթներից շոգած և զովացնող ստուեր փնտռող ճամբորդը՝ հաստատուն և ստուերախիտ կաղնին տեսնելով վազում է նրա տակ պարապիտ բոյսերը ոտքերի տակ տրորելով։

ՎԱՐԴՕ

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Ֆրանսայի ընկերվարականները համաժողով մը ունեցան Թուռ քաղաքին մէջ։ Այդ համագումարին մէջ կրկին բարձրացաւ նախարար Միլլերանին խնդիրը։ Այդ առթիւ համաժողովը որոշեց որ այսուհետեւ ընկերվարական երեսփոխան մը՝ առանց նախապէս ընկերվարականներու հետ խորհրդակցելու, իրաւունք չը պիտի ունենայ ոեւէ պաշտօնական նախարարութեան մէջ պաշտօն ստանձնել։

Այդ համաժողովին մէջ տիրապետող քաղաքականութիւնը բան երեւոյթին այն եղաւ, որ ընկերվարականներու գործելու միջոցները պիտի ըլլան խաղաղ եւ բարլամենտական։ Այդ միջոցով միայն պիտի աշխատին ընկերվարական եւ ելեսփոխաններու թիւը շատցնել եւ օր մը չէ օր մը կառավարութեան ղեկը իրենց ձեռքը առնել, ու իրենց ծրագիրները իրագործել։

* * *

Ռուսիոյ մէջ այս անգամ ձերբակալուած են մօտ 1200 ուսանողներ։ Ատոնցմէ չորս հարիւրը Սիբիր աքսոր ուղարկելու դատապարտուած են։

Վեց քաղաքներու համալսարաններ փակուած են։ Ժողովուրդը մեծ յուզումի մէջ է. հետզհետէ կզգայ որ իր ամենաթանկագին մասին հետ շատ շատ խստօրէն կը վարուի կառավարութիւնը. ապագայ յառաջդիմութեան ծաղիկները դեռ չը բացուած, կը հնձուին եւ կը նետուին աշխարհի ամենահեռաւոր ու ցրտաշունչ անկիւնները։

Ահը, սարսափը, կսկիծը, վիշտը եւ կատաղութիւնը իրար խառնուած՝ կը բզկտեն ռուս ժողովուրդին հոգին ու սիրտը։

* * *

Սահմանած է եւ Թուրք ժողովուրդը. Ֆուատ փաշային աքսորուելէն յետոյ 80ի չափ նշանաւոր եւ կարեւոր Թուրքեր եւս ձերբակալուած են Պոլսոյ մէջ։ Ամեն օր խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ տեղի կունենան։ Եւրոպական քանի մը դեսպանները, որոնք դժբաղդութիւնը ունեցած են Համիտը տեսնելու վերջին օրերս, կսեն թէ փատիշահը իր այս վերջին քաջագործութիւններէն յետոյ շատ ուրախ տրամադրութեան մէջ կը գտնուի եղեր։ Ինչպէս կերեւի Համիտը համոզուած է թէ մեծ դատապրութեան մը առաջքը առնել յաջողած է վերջի ձերբակալութիւններով։

ԿԷՏ

ԱԶԳԱՅԻՆ ՑԵՑԵՐԸ

(Շար. նախնդաց թիւին եւ վերջ

Բայց մեր կղերին շահատակութիւնները այսքանով չի վերջանար։ Աւելի զզուելին կայ։ Մտիկ բրէք։

Հայ կղերը, ամենայն ուրախութեամբ տարուան մէջ քանի մը անգամ Կարմիր-Սուլթաններու, Ցարերու համար կոկորդալիր մաղթանքներ կատարել գիտէ։ Հայ եկեղեցին չարգիլեր։ Ու եթէ պզտիկ փոփաք մը յայտնուի Համիտին կողմէ, Օրմանեան էֆէնտին Թերեւս անոր պատկերն ալ սուրբերուն քով զետեղէ։

Աս միեւնոյն Սուլթանն է սակայն որ ջարդեց ու կը ջարդէ Հայը, կը պղծէ անոր եկեղեցին, կը հայհոյէ անոր։

Ի՞նչ բրաւ կղերը ադ ամենքուն դէմ.—քծնեցաւ, ոտքերը լզեց ու նոյն եկեղեցիներուն մէջ աղօթք կը կատարէ նոյն Սուլթանին համար։

Առէք հիմա հայ յեղափոխականը.—ան իր ազգին պատիւն հետ, հայ ազգին փրկութեան գործին հետ, հայ եկեղեցիին պատիւն ալ բարձր բռնելու համար կուրծք տուաւ ու կուտայ ադ մէկ եւ նոյն Համիտին, ան կը զոհուի ու կը կախուի։

Ի՞նչ կուզէք որ ընէ հայ կղերը ասոնոր ոսկորներուն տակէն գոնէ. երախտագիտական սրտաբուխ մաղթանք մը, հոգեհանգիստ մը. անանկ չէ՞։ Լաւ։

Ահա՝ ուրեմն հայ նահատակներու պաշտելի ոսկորները. ահա՝ յեղափոխականին անշնչացած մարմինը. քա-

նի՞ անգամ հայ կղերը, ինքնաբերաբար մտածեց յիշել ատ պարտքը։ Ընդհակառակը։ Ան չըրաւ ատիկա. եւ մինչեւ անգամ անոր վատ գործը մինչեւ նահատակներու կերեզմանը հասաւ, հոգեհանգստի գաղափարը յղացողներուն ու գործադրողներուն արգելք ըլլալով։

Անմոռանալի Պետօր եւ իր ընկերներուն գերեզմանին առջեւ Պաղճեան ներու, տէր Սարգիսներու եւ Օրմանեաններու վաստութիւնը աչքերնուս առջեւն է, որը պէտք է մեծ տառերով գրուի պատմութեան մէջ։

Կղերին յիմարութեան հանող ասվատութիւնները, իրար հակասող արարքները աչքի առջեւ ունեցող մէկը, իր հետաքրքրութիւնը յագեցնելու համար թող փորձուի հարցնել մեր էֆ փառաւոր մօրուք եւ փառաւոր դէմք ունեցող վարդապետներէն մէկուն.

—Հայր սուրբ, ո՞ր օրէնքը կարգիլէ յեղափոխականներուն կամ Ալիշանին համար հոգեհանգիստ կատարելը։

—Մեր եկեղեցիին օրէնքը զաւակս, կարգիլէ պիտի պատասխանէ ան։

—Բայց ո՞ւր գրուած է ատ օրէնքը. ո՞ր գրքին, ո՞ր տողին մէջ։

—Եկեղեցիին օրէնքի կարգիլէ կըսեմ, չե՞ս հասկնար, ճանրմ։

—Հայր սուրբ, պատմութեան մէջ յիշուած շատ մը օրինակներէն զատ այսօր իսկ դուք Սուլթաններու, իշխաններու համար հոգեհանգիստ կամ մղթանքներ կը կատարէք։ Ասոր ի՞նչ պիտի ըսես։

—Ատ տարբեր խնդիր, զաւակս։

—Տարբերն ո՞ր է. հայ եկեղեցին «խաթեր. խատուր» կը նայի՞։ Օրէնք մը ցոյց տուր։

—Զաւակս, դուն ճահիլ ես. աշխարհական ես, ու չես գիտեր—եւ ձեռքը խոճաման ցախաւել մօրուքին տանելով—սա մօրուքս ամեն բան գիտէ. ասոր լաւ համոզուելու ես, որովհետեւ հոգ խօսողը մանաւանդ Աստուծոյ եւ եկեղեցիի պաշտօնեան է։

Ան ապուշ պատասխանէն զատ ուրիշ ոչինչ։

Օրէնքը կարգիլէ, լմնցաւ գնաց։ Փա՞սատ կուզէք. օրինա՞կ կուզէք, տանկ յիմարութիւններու հետ գործ չունին անոնք. փաստն ալ իրենք են, օրէնքն ալ։

Ի՞նչ երկարեմ, օր նոր, ապացոյց նոր մեր կղերին շահատակութիւնները, վատութիւններն ու անբարոյականութիւնները պարզող։

Վերջապէս օր նոր, գանգատ ու բողոք նոր կղերին վատ արարքներուն դէմ, որոնք դեռ խոտոր կը համեմատին շահատակութիւններուն հետ։

Բայց ո՞վ է անոնք սնուցանողը. ո՞վ է քաջալերողը։—Ժողովուրդը։ Որո՞ւ դէմ է ուրեմն բողոքը։

Կղերը դեռ կը շարունակէ բուրվառը ձեռքը «յիշեալ լիջիք»ը ըսել. թէ ձեռքը պաքցնել եւ թէ ժողովուրդէն դրամ շորթել։

Ժողովուրդը ինքն է որ կը սնուցանէ իր միսը կրծող ցեցերը։ Ո՞վ իր դուռը մինչեւ հիմա տէրտէրին կամ վարդապետին առջեւ «շրա՛ֆ» դոցեց։—քիչեր։

Եւ սակայն կղերին դէմ յայտնուած տրտունջները, արթնցնող հակակըղերական հոսանքը՝ որոնք գիտակից տրամադրութիւններու արդիւնք են, մխիթարական է տեսնել, որոնք ըսկսած են առաջանալ, եւ ծաւալելով, ուժովնալով պիտի բորբոքին օր մը չէ օր մը, ու վերջ ի վերջոյ պիտի պայթին, իրենց—կղերներուն չորցած գլխուն։ Ան թող լաւ գիտցած ըլլան։

Բռնութիւններու, անիրաւութիւններու դէմ մղուած ճշմարիտ ու յարատեւ կռիւը, որքան ալ տկար ըլլայ, պիտի աճի, զարգանայ ու պիտի յաղթէ օր մը չէ օր մը։ Ան ալ պատմական աչք ծակող իրողութիւն մըն է։

Մեր կղերը մաքրուելու պէտք ունի՞, եւ ատ բանը պէտք է մտածէ հասկնայ ինքը, կղերը եւ ճարը նայի։ Եթէ չուզեր որ ուշ կամ կանուխ փչրուի բաղխուելով հասարակութեան գիտակից հոսանքին։

Երանի թէ ատ օրը ուշ չըլլայ։

Հրանդ-Ժ. Տայր

Ֆիլիպէ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ

Սլիվնա 22 փեսրուար 1902

Երէկ ՎԱՐԴԱՆԱՆՑ նահատակութեան տարեդարձին առթիւ, տեղւոյս հոգեւոր հովիւ Վաղինակ քահանայ Տէր Մինասեան յետ պատարագի արարողութեան հոգեհանգստեան պաշտօն կատարեց Անդրիանուպոլսոյ մէջ կախաղան բարձրացողներու, և յեղափոխութեան սեղանին վրայ նահատակուող ամբողջ հերոսներու հոգւոյն համար։

Հոգեհանգստի առթիւ՝ քաղաքիս Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէի կողմանէ հրաւիրուած էին նաեւ մակեդոնական կոմիտէի անդամները, որք սիրայօժար պատասխանած էին հրաւէրին և իրենց Ատեն ապետի առաջնորդութեամբ պատուիրակութիւն մը ղրկած էին։

Եկեղեցական արարողութիւնէն յետոյ, տեղի ունեցաւ դպրոցական մի հանդէս, յորում աւուր պատշաճի երգեր երգուեցան և արտասանութիւններ եղան վայժարանի սաներուն կողմանէ։ Խօսեցաւ դպրոցի օգնական ուսուցչուհին՝ Օրիորդ Կոչկարեան, և Լենոյ՝ ազգերու ճակատագրին վրայ ունեցած դերն բացատրելէ զկնի, անցաւ Ե. դդ. դարու կանանց և ցոյց տուաւ անոնց ըրած անձնուիրութիւնը և զոհողութիւնը՝ հանդէպ իրենց ազգին և եկեղեցւոյն։ Ս. Վաղինակ՝ յուզիչ և մանգամայն եռանդալից խօսքերով դրուատեց ու բացատրեց Վարդանանց պատերազմի նշանակութիւնը։ Բաղդատութիւն մը ըրաւ ազգին՝ Ե. դարու և ներկայիս մէջ ունեցած վիճակին, ջատագովութիւնն ըրաւ յեղափոխութեան և անոր անձնուէր զինուորներուն, ու զգացուց ժողովրդեան հանդէպ Մ. գործին ունեցած պարտականութիւնները և ըսաւ թէ՝ «հոգեհանգիստներով, չոր ու ցամաք ներբողականներով միայն յարգելու չենք անոնց յիշատակը, այլ և գործով։ «Սէրէմ ճեանի համար» «ՇԱՐԺՈՒՄ»ի բացած հանգանակութիւնն ալ յիշելով, առաջարկեց, որ ամեն ոք մասնակցի։

Յետոյ, խօսք առաւ Մակեդոնական հարցի մասին։ Ձորակի մէջ։ Ուղեցոյցը տարաւ նրանց մի խոշոր քարի տակ տեղաւորեց՝ ինքը երկու տղաներով գնաց մացառ բերելու։

Մնացողները հրացանները դէմ տուին քարի կրծքին՝ և սկսեցին յոգնած ձեռքերն ու ոտքերը շարժել՝ զգեստները չոչափել հասկանալու համար թէ որչափ են թրջված։ Զափազանց սոված ները իսկոյն պարկերի միջից հաց հանեցին և սկսեցին ոտքի վրա ուտել. երբեմն ցրտից դողալով և լեզուները կծելով։

Վերջապէս մացառի գնացողները վերադարձան. փոքր ինչ չարչարվելուց յետոյ յաջողվեց կրակը վառել. երբ բոցը բարձրացաւ, տղաներից մին ուրախացած սկսեց երգել։

«Արաղ Արաղ ջան արաղ»

Բայց ուղեցոյցը իսկոյն նրա երգը կտրեց ասելով.

— Ի՞նչ ես անում. ինչ երգի ժամանակն է, ձայնդ կը լսեն և ճանճերի պէս վրա կը տան.

— Օ՛ֆ. ինչ անեմ թէ վրա կը տան. իմ տեղը ով լինի որ չը երգի. ժամերով անձրեւի տակ մնացած, սառած յանկարծ կրակ եմ տեսնում, ոնց չը երգե՞մ, ոնց չուրախանա՞մ։ Վրա կը տան, թող տան, վնաս չունի, կը տաքանանք. եթէ մեռնենք էլ, տաք, չիկացած գնդակով կը մեռնենք. թրջված մկան պէս չենք սատկի։

— Լաւ ես ասում, Արշակ, միջամտեց Վահէն, բայց մեռնենք. երբ դրա պէտքը կայ։ Հիմա մեռնելու պէտքը չը կայ. աւելի լաւ է ձայնդ կորի, կրակի կողքին նստիր, տաքացիր և քնիր, մեռնելու ժամանակ դեռ շատ կայ. մի վախնար, ոչ մահը մեզնից կը փախչի և ոչ էլ մենք մահից։

Արշակը ձայնը կարեց. ամենքն էլ կրակը չրջապատեցին—սկսեցին հաց ուտել. կամաց կամաց զգեստներն էլ չորացան. ուղեցոյցը եւ երկու տղերք գնացին կրկին մացառ բերին եւ լցրին օճախի վրայ։ Երբ կշտացան, տաքացան, Վահէն ասեց.

—Դէհ. տղերք, հիմա քնեցէք. այսօր պահապանութիւնը ես կանեմ. որովհետեւ քունս բոլորովին չի տանում։ Տեսնում եմ որ դուք լաւ քուն ունէք։

—Չէ՞, չէ Վահէ. միջամտեց Արշակը, դու քնացիր. դու որչափ թարմ լինես, մեր գործը այնքան լաւ կը գնայ. ես ճանապարհին գնացածս միջոցին էլ կարող եմ քնել. բայց դու չես կարող. եւ իրաւունք չունիս քնելու։ Այս դիշեր ես պահապան կը լինեմ։

—Էհ՝ լաւ, սիրտդ չեմ կոտրի առարկեց Վահէն. դու եղիր պահապան, բայց լաւ ուշադրութիւն դարձրու, հենց որ մի կասկածելի շշուկ լսես իսկոյն ինձ զարթեցրու. սես այսքան մարդի կեանքը քու ձեռքում է պահված. եթէ դու էլ քնես. յանկարծ թուրքերը կամ քրդերը մեզ վրա տան, բոլորս էլ կորած ենք։

Տղայքը կրակի շուրջը թափվեցին. Վահէն գնաց թիկնեց քարին եւ այդ պէս մնաց. Արշակն էլ օճախի մի անկիւնում տեղաւորվելով. չոքեց եւ սկսեց կրակի հետ խաղալ։

Մի քանի վայրկեանից յոգնած զինակիրները սկսեցին անուշ անուշ մշմշալ. Արշակը տրեխների կապերը քանդել սկսեց և նրանց մէջը մաքրել. իսկ Վահէն գլուխը չոր քարին դրած մտածում էր.

—Դժուար, շատ դժուար գործ, հայ ժողովրդի մէջ քաղաքականութեան գործը յաջողցնել. հայ յեղափոխականը պարտաւոր է գերմարդկային ճիգեր թափել. Հայ ժողովուրդը մինչեւ օրս երբէք չի մտածել զէնքով ազատութիւն ձեռք բերել. նրա մօտ զէնք չը կայ. նրան զէնք պէտք է տալ. զէնքը դրսից պէտք է բերել, պատրաստ եւ յանձնել իրեն։ Ահա մենք վան զէնք տարանք. մի քանի հրացան, եւ հարիւր անգամ աջող գնալ գալով հազիւ մի քանի հարիւր հրացան մատակարարենք. զարմանալի ժողովուրդ ճշմարիտ. քրդերի գոյութիւնը փոխանակ հային քաջացնելու, յանդուգն. ճարպիկ եւ կատաղի դարձնելու, հայի մէջ մեռցրել է ինքնապաշպանութեան զգացմունքը. Հայը գոյութեան սպառնացող պայմաններին հանդէպ փոխանակ կորով ստանալու, ընդհակառակը կորցրել է իր ունեցածն էլ. փոխանակ գիմադրելու, հպատակվել, ենթարկվել է։ Մաքով, ձգտումներով քրդից եւ թուրքից բարձր հայը, նրանց աջեւ դողում է այնպէս, ինչպէս հաւի ձագը ուրուրի առջեւ. Հայը քրդից հարուստ է. Հայը տուն ունի, Հայը դպրոց ունի, Հայը խելք ունի. Հայ եկեղեցի ունի, հայը աւազակի քուրդը դպրոց չունի, նրա դպրոցը կռիւն է. դաշտագիրքը հրացանը. քուրդը մզկիթ չունի. նրա մզկիթը լեռան կատարն է, քուրդը տուն չունի. տունը վրանն է. քուրդը կալուածք չունի. բայց ամեն ինչ կարող է ունենալ. քուրդը մշակուած խելք չունի. բայց սիրտ ունի, քաջ է գոնէ հայի հանդէպ. քուրդը քահանայ չունի բայց մոլա ունի, որ նը բան, կռիւ եւ կռիւ է քարոզում։

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՍ III

ԳԼՈՒԽ Գ.

Լուսադէմին Վահէն և՝ իր ընկերները գտնվում էին Վարագ լերան հիւսիսային ստորոտում։ Ամբողջ գիշերը մաղացող աշնան անձրեւը բոլորին էլ այնքան էր թրջել. որ խեղճ զինակիրների չապիկներն անգամ խոնաւ էին։

Տրեխները ցեխով բեռնաւորված՝ քայլերը դժուարացնում էին. բոլորն էլ չափազանց յոգնել էին և հանգստանալ էին ուզում. բայց հանգստանալու համար հարկաւոր էր մի ապահով տեղ, ամայութեան մէջ. թաղնվելու յարմար անկիւն, որովհետեւ շուտով լոյսը պէտք է բացվէր. իսկ լոյսը շատ էլ այնքան հաճելի չէր մեր զինակիրների համար, այն էլ Վանից այդչափ մօտիկ տեղերում։

Վերջապէս ուղեցոյցը ասեց.

— Դէ, տղերք՝, քայլերդ արագացրէք, մտնենք ահա այն ձորակը, այնտեղ մացառներ կան, կարող ենք և կրակ վառել՝, ու մի լաւ հանգստանալ։ Դէ՝, ձեզ ղուրբան՝, հետեւէցէք ինձ՝, շուտով ձորը մտնենք. այստեղ մօտիկ մի քրդի գիւղ կայ, անպիտանները կարող են մեր հոտը առնել. եթէ առան, էլ մնաս բարով հանգստութիւն, պէտք է թէ վազենք և թէ կուենք։

Շուտով հանգստանալու յոյսը յոգնած զինակիրներին թեւ տուեց. քայլերը արագացան, և ճիշդ որ մի կէս ժամից յետոյ մտան մի ձորակի մէջ։

Ուղեցոյցը տարաւ նրանց մի խոշոր քարի տակ տեղաւորեց՝ և՝ ինքը երկու տղաներով գնաց մացառ բերելու։

Մնացողները հրացանները դէմ տուին քարի կրծքին՝ և սկսեցին յոգնած ձեռքերն ու ոտքերը շարժել՝ զգեստները չոչափել հասկանալու համար թէ որչափ են թրջված։ Զափազանց սոված ները իսկոյն պարկերի միջից հաց հանեցին և սկսեցին ոտքի վրա ուտել. երբեմն ցրտից դողալով և լեզուները կծելով։

Վերջապէս մացառի գնացողները վերադարձան. փոքր ինչ չարչարվելուց յետոյ յաջողվեց կրակը վառել. երբ բոցը բարձրացաւ, տղաներից մին ուրախացած սկսեց երգել։

«Արաղ Արաղ ջան արաղ»

Բայց ուղեցոյցը իսկոյն նրա երգը կտրեց՝ ասելով.

— Ի՞նչ ես անում. ինչ երգի ժամանակն է, ձայնդ կը լսեն և ճանճերի պէս վրա կը տան.

— Օ՛ֆ. ինչ անեմ թէ վրա կը տան՝. իմ տեղը ով լինի որ չը երգի՝. ժամերով անձրեւի տակ մնացած, սառած յանկարծ կրակ եմ տեսնում, ոնց չը երգե՞մ, ոնց չուրախանա՞մ։ Վրա կը տան, թող տան, վնաս չունի, կը տաքանանք. եթէ մեռնենք էլ, տաք, չիկացած գնդակով կը մեռնենք. թրջված մկան պէս չենք սատկի։

— Լաւ ես ասում, Արշակ, միջամտեց Վահէն, բայց մեռնենք. երբ դրա պէտքը կայ։ Հիմա մեռնելու պէտքը չը կայ. աւելի լաւ է ձայնդ կորի, կրակի կողքին նստիր, տաքացիր և քնիր, մեռնելու ժամանակ դեռ շատ կայ. մի վախնար, ոչ մահը մեզնից կը փախչի և ոչ էլ մենք մահից։

Արշակը ձայնը կարեց. ամենքն էլ կրակը չրջապատեցին—սկսեցին հաց ուտել. կամաց կամաց զգեստներն էլ չորացան. ուղեցոյցը եւ երկու տղերք գնացին կրկին մացառ բերին եւ լցրին օճախի վրայ։ Երբ կշտացան, տաքացան, Վահէն ասեց.

—Դէհ. տղերք, հիմա քնեցէք. այսօր պահապանութիւնը ես կանեմ. որովհետեւ քունս բոլորովին չի տանում։ Տեսնում եմ որ դուք լաւ քուն ունէք։

—Չէ՞, չէ Վահէ. միջամտեց Արշակը, դու քնացիր. դու որչափ թարմ լինես, մեր գործը այնքան լաւ կը գնայ. ես ճանապարհին գնացածս միջոցին էլ կարող եմ քնել. բայց դու չես կարող. եւ իրաւունք չունիս քնելու։ Այս դիշեր ես պահապան կը լինեմ։

—Էհ՝ լաւ, սիրտդ չեմ կոտրի առարկեց Վահէն. դու եղիր պահապան, բայց լաւ ուշադրութիւն դարձրու, հենց որ մի կասկածելի շշուկ լսես իսկոյն ինձ զարթեցրու. սես այսքան մարդի կեանքը քու ձեռքում է պահված. եթէ դու էլ քնես. յանկարծ թուրքերը կամ քրդերը մեզ վրա տան, բոլորս էլ կորած ենք։

Տղայքը կրակի շուրջը թափվեցին. Վահէն գնաց թիկնեց քարին եւ այդ պէս մնաց. Արշակն էլ օճախի մի անկիւնում տեղաւորվելով. չոքեց եւ սկսեց կրակի հետ խաղալ։

Մի քանի վայրկեանից յոգնած զինակիրները սկսեցին անուշ անուշ մշմշալ. Արշակը տրեխների կապերը քանդել սկսեց և նրանց մէջը մաքրել. իսկ Վահէն գլուխը չոր քարին դրած մտածում էր.

—Դժուար, շատ դժուար գործ, հայ ժողովրդի մէջ քաղաքականութեան գործը յաջողցնել. հայ յեղափոխականը պարտաւոր է գերմարդկային ճիգեր թափել. Հայ ժողովուրդը մինչեւ օրս երբէք չի մտածել զէնքով ազատութիւն ձեռք բերել. նրա մօտ զէնք չը կայ. նրան զէնք պէտք է տալ. զէնքը դրսից պէտք է բերել, պատրաստ եւ յանձնել իրեն։ Ահա մենք վան զէնք տարանք. մի քանի հրացան, եւ հարիւր անգամ աջող գնալ գալով հազիւ մի քանի հարիւր հրացան մատակարարենք. զարմանալի ժողովուրդ ճշմարիտ. քրդերի գոյութիւնը փոխանակ հային քաջացնելու, յանդուգն. ճարպիկ եւ կատաղի դարձնելու, հայի մէջ մեռցրել է ինքնապաշպանութեան զգացմունքը. Հայը գոյութեան սպառնացող պայմանների հանդէպ փոխանակ կորով ստանալու, ընդհակառակը կորցրել է իր ունեցածն էլ. փոխանակ գիմադրելու, հպատակվել, ենթարկվել է։ Մաքով, ձգտումներով քրդից եւ թուրքից բարձր հայը, նրանց աջեւ դողում է այնպէս, ինչպէս հաւի ձագը ուրուրի առջեւ. Հայը քրդից հարուստ է. Հայը տուն ունի, Հայը դպրոց ունի, Հայը խելք ունի. Հայ եկեղեցի ունի, հայը աւազակի քուրդը դպրոց չունի, նրա դպրոցը կռիւն է. դաշտագիրքը հրացանը. քուրդը մզկիթ չունի. նրա մզկիթը լեռան կատարն է, քուրդը տուն չունի. տունը վրանն է. քուրդը կալուածք չունի. բայց ամեն ինչ կարող է ունենալ. քուրդը մշակուած խելք չունի. բայց սիրտ ունի, քաջ է գոնէ հայի հանդէպ. քուրդը քահանայ չունի բայց մոլա ունի, որ նը բան, կռիւ եւ կռիւ է քարոզում։

(Շարունակելի)

կան Կոմիտէի Ատենապետը՝ Տիար Ալէքսիէֆ ու պուլկարերէն լեզուաւ հակիրճ նկարագրութիւնն ըրաւ հայկական և Մակեդոնական նահանգներու դժոխային վիճակին. ծանրացաւ ժողովրդեան հանդէպ յեղափոխութեան ունեցած պարտուց մասին և նա ալ կրկնեց թէ՝ «զէնք ունեցողը՝ զէնքով, դրամատէրը՝ դրամով, գրագէտը՝ գրիչով, և վերջապէս ամէն անհատ՝ իր կարողութեանը համեմատ պէտք է օգնէ»։ Խօսքը վերջացուց շնորհակալութիւն յայտնելով, որ մեր ազգային ծոնին զիրենք ալ հրաւիրած էինք և այսպիսով ցոյց տուած էինք երկու դժբաղդ ազգերու յեղափոխականներուն մէջ տիրող եղբայրական զգացումներն։

Տիար Մանիէլ Ճէրրահեան յանուն հայ ժողովրդին և Հ. Յ. Դ. Կոմիտէի յուզեալ և զգածեալ շեշտերով շնորհակալութիւն յայտնեց Տիար Ալէքսիէֆի և ընկերներուն։ Այս առթիւ չի մոռնամք յիշատակելու թէ՝ Տիար Ճէրրահեան Սոֆիայի զինուորական վարժարանին այս տարուան միակ հայ շրջանաւարտ ուսանողն է և իր քննութեանց մէջ յաջողակներէն հանդիսացած է. մեծ յոյս ունիմք թէ՝ մեծ յաջողութիւններ պիտի ունենայ իր ասպարէզին մէջ։ Հանդէսը փակուեցաւ Տէր Հօր պահպանիչով, և ներկայները մեկնեցան անուշ տպաւորութեան տակ։

ԱՅԲ-ՍԷ

Ֆօֆշան 23 դեկտ. 1902

Ինչպէս նախորդ տարիներ, նոյնպէս այս տարի ամսոյս 19ին Ս. Ղեւոնդեանց տօնին օրը քաղաքիս տրական վարժարանին անուան տարեդարձին հետ աեղի ունեցաւ նաեւ ՎԱՐԴԱՆԱՆՑ հանդէսը, սովորականէն շատ աւելի մեծ շքով մը։

Առաւօտեան ժամերգեցողութենէն վերջ, վարժարանին զարդարուած սրահը լեցուած էր երկսեռ ամբոխով մը։ «Շարժեցէք դուք» խանդավառ երգով սկսան հանդէսը. հետզհետէ խօսուեցան ճառեր ու թնդացին երգեր, որոնց թողած տպաւորութիւնը խոր եղաւ և խոր յուզում պատճառեց ունկնդիրներու սրտին։ Ուսուցիչներն արժանի են ջերմագին շնորհաւորութեան ու շնորհակալութեան։

Ամենէն վերջը խօսք առաւ Հոգ. Ատենապետ Տիար Ճէրհան և Բանախօսի եռանդուն շեշտերով պարզեց օրուան հերոսներու անձնուիրութեան մեծութիւնը և հրաւէր կարդաց հետեւիլ միշտ անոնց անմոռանալի շաւղին յարգելով յաւէտ յիշատակն այդ անզուգանդէմներուն, որոնք հայուն պատմական փառքը յօրինեցին հայրենասիրութեան ամենավսեմ օրինակն ու դասը թողլով մեզ կտակ ու նպատակ։

Ժամ մը ետքը հանդէսը վերջացաւ ընդհանուր ծափահարութիւններու և ուրախութիւններու հեղեղին տակ։ (*)

Հանդիսատես

(*) Պաղ անհամբերութիւն մը ու խընդուք մը խլեցին՝ Տ. Պետրոսին, Տիկինն ու աղջիկը, որոնք ոչխարի նըման, ժամէն ելնելէն վերջը զատուեցան ամբոխէն ու գնացին տուն, անշուշտ վարժարանին դէմ փորցաւ մ'ուենենալու էին. իրաւի մեծ ապերախտութիւն։ Նոյն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Նիւ Եորք փետրուար 8 1902

Հայաստանի ներկայ կացութեան մասին հեռագրերու օր ըստ օրէ հաղորդած լուրերը, Ամերիկայի հայերու մէջ աւելի եւս բորբոքեցին հայրենիքին օգնելու կրակը, որ միշտ վառ է այս հեռու երկրի հայոց սրտին մէջ։

Յեղափոխական կուսակցութիւնները միայն չեն որ կը գործեն։ Ինքնապաշպանութեան կարիքը ամէն հայ զգացած է։ Ասոր համար ալ Նիւ-Եորքի պատուաւոր հայերէն և Ամերիկացիներէ կազմուեցաւ յանձնախումբ մը որը նպատակ ունի հայերէ և Ամերիկացիներէ դրամ հանգանակել Հայաստանցի անզէն հայուն ձեռքը ինքնապաշպանութեան գործիք մը տալու։

Յանձնախումբին հայ անդամները Ամերիկայի հայերուն ծանօթ անձնաւորութիւններ են-Տօքթ. Այվազեան Նիւ-Եորքի քաղաքային բժիշկն է, պն. Այէօն Կորգի վաճառական, իսկ Մաշթոց վարդապետ ծանօթ է իր եռանդուն գործունէութեամբ, որ որ պաշտօնավարած է, փոխանակ մեր դատարկապորտ կղերներու սովորութեան համեմատ, իր փորին հագեցումը նայելու, միշտ աշխատած է բարեգործական ընկերութիւններ կազմակերպել։ Պոսթընի, Նիւ-Եորքի և Ֆիլատէլֆիայի կանանց ընկերութիւնները Մաշթոց վարդապետի ջանքերու արդիւնքն են։

Յանձնախումբի Ամերիկայի անդամները նոյնպէս ծանօթ անձնաւորութիւններ են. անոնցմէ Տիկին Պարոյր անցելոյն մէջ ալ Հայկական դատին համար աշխատած է իր էրկան հետ և ծանօթ է հայերուն ալ։

Յանձնախումբը իր գործը սկսեց շատ յաջող կերպով։ Թրոյի մէջ, իր Անդրանիկ ժողովին մէջ հանգանակեց 1650 ֆրանք։ Ու ասիայն կը բաւէր իրենք զիրենք յեղափոխական անուանող չարասիտները կատղեցնելու։

Խօսքս Մարտեաններու մասին է։

Ասոնք (Մարտեանները) ամբողջովին կորսնցուցած են իրենց ազդեցութիւնը և նեղը մնացած վայրենութիւններու կը դիմեն ոեւէ լուրջ ձեռնարկ խանգարելու։

Յանձնախումբը լուծել ջանացին նախ։ Իրենց կեդրոնի անդամ Կ. Յ. Փափազեան, մի թուլամորթ Գամլիոն յանձնախումբի անդամներէն Տիկին Պարոյրին կը ճանչնար։ Ինքնապաշպանութեան յանձնախումբին շրջաբերականին տակ տիկնոջ ստորագրութիւնը տեսածին պէս, նամակ մը կը գրէ տիկնոջ հետեւեալ իմաստով. թէ ինք (Փափազեան) խորհուրդ չը տար տիկնոջ այդպիսի ձեռնարկի մը մասնակցիլ, որովհետեւ այդ իսկապէս մի տեսակ օգնութիւն պիտի ըլլայ ապստամբ յեղափոխականներուն, «որոնց պատճառաւ» անմեղ հայեր պիտի ջարդուին։ Հոս արդէն որոշ կը տեսնուի թէ այդ յեղափոխական° պեսը° ինքն օտարին կը սորվեցնէ թէ յեղափոխականներուն օգնելու չէ որովհետեւ անոնք ջարդերու պատճառ կըլլան։ Այ աւէ կը հասկցուի Մարտեաններու յեղ. բարոյականը։ Ասկէ աւելին կայ։ Նոյն այդ Փափազեանը իր թերթին, «Զայն Հայրենեաց»ի մէջ հրատարակեց թէ՝ յանձնախումբի անդամները մէկիկ մէկիկ հրաժարած են։ Մի պոչաւոր սուտ։ Յանձնախումբը իր եղած կազմովը կը կենայ և միջոցներ ձեռք առած է իր թիւին վրայ աւելցնել ուրիշներ ալ։

Ու ասոնք ամէնը, ինչպէս նաեւ յանձնախումբի հասցէին նեղուած նախատինքներ եկան, Փափազեանի թերթին մէջ (որ նաեւ տեղական վարերացուած օրգանն է Մարտեաններուն) որ ժողովրդին միտքը պղտորեն գործը կասեցնեն։ Բայց չը յաջողեցան։

Սակայն վատերու համար ամէն միջոց արդարանալի է. կատղած թրքական միջոցներու դիմեցին։

Փետ. 2ին Նիւ-Եորքի մէջ յանձնախումբը հրապարակային ժողով մը սարքած էր։ Ժողովին խօսելու համար հրաւիրած էին թէ Մարտեաններէ և թէ Դաշնակցականներէ ատենախօսներ։ Մարտեանները մերժած էին հրաւէրը. Դաշնակցականներէն «Հայրենիք»ի խմբագիր պն. Վռամեան ընդունած էր։

Ժողովը սկսեց շատ կանոնաւոր կերպով։ Պն. Վռամեան, Մարտեաններու կեդրոնական օրգան «Նոր Կեանք»էն և Եւրոպական լրագիրներէ կատարներ կարդաց։ Ու շատ պերճախօս լեզուով ապացուցց, թէ 1. Սասունը ամիսներէ ի վեր վտանգի մէջ եղած է. 2. հոն ինքնապաշպանութեան համար կռուող են նոյն իսկ հայ կիներ, 3 ջարդի մը վտանգը երթալով կը ծանրանայ և 4. թէ նոյն իսկ Մարտեաններ կընդունին թէ այդ լեռնականներուն անմիջական օգնութեան հասնելու է։

Յետոյ Մաշթոց վարդապետ Ինքնօգնութեան յանձնախումբի կողմէն բացատրեց ժողովին նպատակը և հրաւիրեց ժողովուրդը որ հանգանակութեան մասնակցին։ Ու ահա բեմը ցատկեց Մարդուկիսեան վարդապետը (սի բողոքական պատուելի, որ անօթի չը մնալու համար կրօնափոխ եղաւ Մարտեաններու օգնութեամբը) ու հակառակ ժողովի կարգապահութեան սկսեց կանչուտել (նոյն իսկ սպառնացաւ Մաշթոցին ծեծել տալ). ու ահա իր արբանեակները, որոնք լաւ մը արբած էին, սկսեցին անլուր հայհոյութիւններ ընել։ Ժողովասրահին նայողը ստիպուած եղաւ եկեղեցական լոյսը գոցել ազմուկը դադրեցնելու համար։ Սրահը Եր. Փր. ընկ. կը վերաբերէր ու ճրիաբար տրուած էր անձնախումբի տրամադրութեան տակ. բայց, Մարտեան հայհոյանքի հերոսները, այդ սրահի գործածութիւնը, հայոց կողմէ, վերջնականապէս արգիլեցին։

Ու վերջ ի վերջոյ բոլոր թոյնը դուրս թափեցին։ Խղճերը մռայլեր են, թէ ասոնք դրամը կը հաւաքեն, լաւ։ զէնքը Հայաստան ղրկելու համար միջոց մը պէտք է։ Եթէ Մարտեան կուսակցութիւնը, (ըստ իրենց կեդրոնի թիւ 3 շրջաբերականին) ոչ միայն երկրի մէջ գործ մը չը կրցաւ ընել, հապա եղած կազմակերպութիւններու հետ ալ յարաբերութեան կապը չկրնալ պահպանելու համար ցրուեց։ Եթէ կըսեմ այսքան հեշտ գործ մը անդամ չի կրցաւ ընել, որեմն հոս կազմուած յանձնախումբը ինչ միջոցներով զէնքը ներս պիտի փոխադրէր։ Մտածեցին ու եզրակացուցին թէ անպատճառ զէնքերը Դաշնակցութեան զինակիրներու միջոցաւ ներս պիտի մտցուէին։ Ուրեմն հակառակելու էր։ Ու ի՞նչ ըսես չը սին. սակայն այս ըսուած քներու մէջ ամենէն ապուշը այն է թէ Դաշնակցականները չեն կրնար գործին հասնիլ։ Հանգանակութիւն

ցութեանց ոյժերու ջլատմանը աչխատիլ որ անոնք ուժասպառ ըլլալով հարկադրուին իրարու հետ միանալու», ահա նմոյշ մը քեզ հայ ժողովուրդ միութեան կարեւոր անդամներ կարծուած մէկու մը նկարագրին վրայ. ալ ինքդ դատէ թէ ի՞նչ տեսակ խելքի եւ մտքի ծնունդ է միութեան յանձնաժողովը. ուրեմն այդպիսիներու երեսին ի՞նչպէս չը փակցնենք, խաբեբայ, դրամաշորթ մակդիրը։

Ց.

Վառնա, 1 մարտ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մանչեսթրի հայերը Իզմիրի հայոց հիւանդանոցի հարիւրամեակին առթիւ մօտ 200 ոսկի հանգանակեր են ի նպաստ նոյն հաստատութեան։

—Կիլիկիոյ կաթողիկոսական տեղապահը Պատրիարքարանի առաջարկեր է որ երկրորդ ընտրելի Սահակ եպիսկոպոս Խապայեան կաթողիկոս հաստատուի, փոխանակ նոր ընտրութիւններ կատարելու։

Այդ առաջարկը պատշաճ և օրինաւոր չէ համարուեր։

—Էջմիածնէն 450 ոսկի ղրկուեր է Պատրիարքարան, ի նպաստ Կարնոյ արկածելոց։

—Լօնտոնէն մեզ կը գրեն որ «Պատանի» թերթին խմբագիրը ինքը, Ց. Թումայեան է. և իրեն քով գտնուած որբերը ոչ միայն բաժին չունին այդ հանդէսին խմբագրութեան մէջ, այլ և անոր ուղղութեան բոլորովին հակառակ են։ Ընդհակառակը պատանիները ուզած են ուրիշ հանդէս մը հրատարակել և Թումայեան արգելք հանդիսացած է։

Թղթակիցը «Պատանի»ն միայն շահագործումի աղբիւր մը կը հռչակէ և ուրիշ ոչինչ։

—Պոլսոյ թերթերը կը հաղորդեն որ Էջմիածնայ Տիեզերական ազգաժողովոյ անդամ եպիսկոպոս վարդապետները Կաթողիկոսէն խնդրած են իրենց ռոճիկները աւելցնել, և Կաթողիկոսը ոչ միայն խնդրատուներու այլ և ամբողջ միաբաններու ռոճիկները աւելցուցած է։

Հայոց ազգին աչքը լոյս. բաւական չէ որ ծոյլ և անպէտք կուսակրօնները ձրիապէս կապրին—այլ և Խրիմեան անոնց աւելի մեծ ամսաթոշակներ կը բաշխէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Թանը» կը հաղորդէ որ ձերբակալուած Շաքիր փաշան և ուրիշ երկու սպաներ երեք օր ձերբակալուած մնալէ յետոյ ազատ արձակուեր են։ Ձերբակալուած մէկոցնուն անոնց տները խուզարկուեր են։

—«Լա կազէթ տը ֆրանք Ֆորթ» կը հաղորդէ թէ Սուլթանի լրտեսապետ Ֆէհմի փաշային տունը հրդեհ է ընկեր։ Տունը շատ շուտով բռնկեր է. կազի հետքեր գտնուած են. կը կարծուի թէ վրէժխնդրութիւն է շարժառիթը։

—Ամերիկայի դեսպանատունը երկրորդ նօթա մը տուեր է Բ. Դրան, որով կը յայտարարէ թէ քանի որ Միս Սթոնը Թուրքիոյ հողին վրայ գերուեր է, փրկանքը նոյնպէս Թուրքիոյ մէջ վճարուեր է, ուրեմն Թուրքիա պարտաւոր է աւազակները ձերբակալել։

—Պուլկար հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէ որ Սուլթանը իրատէով մը հրամայած է այլ եւս հայոց դպրոցներու մէջ Հայոց պատմութեան դասաւանդութիւնը չարգիլուի։

—Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Թարապուլուսը Եգիպտոսին պիտի միացուի։

—Անցեալ ուրբաթ Պոլիս եկեր են բազմաթիւ գերմանացի զբօսաշրջիկներ. ոստիկանութիւնը խստութեամբ հսկեր է զանոնք, այդ օրը շատ մը մարդիկ ձերբակալուեր են։

ՍԵՐԲԻԱ

Ալվանիչ անունով մէկը քանի մը օր առաջ ծածուկ կերպով անցաւ Սերպիա միտք ունենալով Սերպիոյ թագաւորը տապալել և ինքը դիկթաթոր ըլլալ։ Ալվանիչ Սրպական ժէնէրալի դգեստներու մէջ ծպտուելով Շապան կոչուած տեղի մի քանի պաշտօնեաները կը դրաւէ. սակայն ժանտարմներու պետ մը չը հնազանդիր, Ալվանիչ կուզէ ժանտարմաններու պետը սպաննել, սակայն վերջինը աւելի ճարպիկ կը գտնուի և զայն կսպաննէ։

Սպաննուածի քովէն կը գտնուին շատ շրջաբերականներ որով ժողովուրդը կը հրաւիրէր գահընկեց ընել Ալէքսանտր թագաւորը։

Ալվանիչ կարկէօրկիէվիչներուն, որոնք Սերպիոյ գահին թիկնածուներ կը համարին զիրենք, գործիքը կը համարուի։ Եւ լուր կը պտտի որ Ալվանիչի տուղը Կարակէօրկիէվիչը պիտի գայ եղեր, բայց չը գիտցուիր թէ ինչու համար ուշ մնացեր է։

Մէկ խօսքով խեղճ Սերպիա փորձանքէ մը ազատեցաւ։

ՌՈՒՍԻԱ

Նամախիի փլատակներու տակէն մինչեւ օրս 2500 դիակ հանուած է. բայց ամբողջ զոհերու թիւը 5000 կը կարծուի։

Նամախին գրեթէ ամայի է. մնացորդին մեծամասնութիւնը կը գաղթէ.

ԹՐԱՆՍՎԱԼ

ՏԷՅԼ ՄԷՅԼԸ լրագիրը կը հաղորդէ որ պօէրները կը շարունակեն անձնատուր ըլլալ։

Օրանժի հիւսիս արեւելեան մասը արդէն բոլորովին մաքրուած է պօէրներէ, միայն Ֆիչները դժուարութիւններու կը հանդիպիցորովհետեւ զօրքի պակասութիւն կայ։

Պօէրական շրջանակներու մէջ չեն հաւատար որ պօէր զօրավարները հաշտութեան համար բանակցութեան սկսիլ առաջարկած ըլլան։

—Պրօտրիկ երեսփոխանական ժողովին մէջ յայտարարած է որ Ֆիչներին ամեն պահանջները կը կատարուին։

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերման կառավարութիւնը Քրաքով հրատարակուած լեհ երկու թերթերու մուտքը Գերմանիա արգիլեր է։

ԱՆԳԼԻԱ

Կառավարութիւնը մտադիր է Իրլանտան աւելի ճնշելու. քանի մը նշանաւոր Իրլանտացիներ ձերբակալուած են։

Թագաւորը հրամայեր է Իրլանտոյ փոխարքային յայտարարել է որ ինք այս տարի չը պիտի այցելէ Իրլանտան։

ՉԻՆԱՍՏԱՆ

Բորթ Արթուրէն Շանկայ եկող չինացի վաճառականները կը յայտարարեն որ Ռուսները Ճաբոնի դէմ պատերազմի կը պատրաստուին. որովհետեւ ռուս իշխանութիւնները այդ վաճառականներուն պատրուիրած են իրենց ընտանիքներն ալ հետերնին տանիլ։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

12 միլիոն հպատակ ունեցող հնդիկ թագաւոր մը կաթոլիկութիւնը ընդուներ է։ Թագաւորին այդ քայլը շատ զօրեղ տպաւորութիւն գործած է իր հպատակներուն վրայ։

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

—o—

Հայրապետ Սարգսեան «Բրէպլովկա» մեծ պողոտային վրայ.

Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատուէրով կօշիկներ. գները չափաւոր. Վստահ ենք թէ յաճախորդները գոհ պիտի մնան ամեն կերպ.

Վառնա

1

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

—o—

Ով որ կը փափագի սենեկին գեղեցիկ եւ արժանավայել զարդ մը աւելցնել, թող բարեհաճի ղրկել մեր հասցէին 2.50 ֆրանկ, 1 ռուբլի կամ 50 սենթ, փոխարէն՝ ապահովագրեալ ծրարով, կընդունի Հայոց սիրելի ՆԱՀԱՊԵՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծադիր լուսատիպ պատկերն, յատուկ խնամքով տպուած 50էն 65 հարիւրամեայ մեծութեամբ փայլուն եւ սաւուար թուղթի վրայ։ Գործակալայ եւ մեծաքանակ գնողաց իւրաքանչիւր տասը օրինակաց վրայ մէկ օրինակ ձրի կը ղրկուի։

Դիմել կանխիկ

ՍԻՄՕՆ ՆԱՀԱՊԵՏ եւ ԸՆԿ.
Ս. Ժիսվ. Դրիսսոդոմս 5715
(Իտալիա) Վէնէտիկ

Ծանօր.—Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծադիր լուսատիպ, առայնակարգ եւ ամենահիասքքրական պատկեր մը, որ կը ներկայացնէ հռչակաւոր ազգային գործիչներու ժողով մը։

Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք։

ՆՕԹԱՑՈՎ ԵՐԳԵՐ

—o—

Ֆիլիպէի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը։

«Մեր Հայրենիք», «Մայր Արագսի» և «Զիմգլխին ֆաթէն կիտամ», «Լռեց ամպերը», (Կարա Մուրզա), «Ի մարտ—բաւ է որքան», «Վրէժ—թող կորնչին», մէկական երես 15 սանթիմ։

«Արիք Հայկազունք», «Ես լսեցի մի անուշ ձայն», և «Օյնապան»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) երկուքական երես 30 սանթիմ։

«Ռազմերգ—Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ։

«Գնացէք տեսէք ո՞վ է կերել զէձ» և «Վեփո լէ լէ»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) «Կախազան—բերին աթոռ ելաւ» 4ական երես 60ական սանթիմ։

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթիմ։

Ֆիլիպէ Հայի. Երգ.—Խստր. Խումբ Հասցէ

Յակոբ Սրվաճեան
(Ֆիլիպօբլ)

ԳՈՒԹԱՆ

Հանդէս ամսեայ, հողագործական, գիտական եւ արուեստագիտական
Հիմնադիր տնօրէն
Գարեգին Ը. Մեծատուրեան
Հրատարակուած է Ը.րդ թիւը, շահեկան բովանդակութեամբ։
Տարեկան բաժնեգինն 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Glacière

Отговорникъ :
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна